Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	«Սովորողների մոտ ստեղծագործական ունակությունների ձևավորումը ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում տարրական դպրոցում»
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	• Սեդա Սաֆարյան Արշակի • Ուսուցիչ • +37498476041 • safarjan199215@gmail.com • Ռուսաց լեզու • 2-րդ, 3-րդ , 4-րդ , 5-րդ , 6-րդ , 7-րդ , 8-րդ , 9-րդ , 10-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ.հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	ՀՀ Արարատի մարզի «Սիսավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ sisavan@schools.am

Բովանդակություն

Ներածություն.....
....3
Գրականության ակնարկ
1.Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումն առանձնահատկությունները ռուսերենի դասավանդման ընթացքում.....6

Գործնական համատեքստ
2.Դասավանդման մեր փորձից.....10
Եզրակացություններ.....
....15
Օգտագործված գրականության ցանկ.....16
Հավելվածներ.....
.17

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	**Նպատակ**- Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսուցչի կողմից ճիշտ պլանավորված դասի դերը սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման վրա: **Հարց**- Ինչպես՞ ձևավորել ստեղծագործական ունակություններ ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում տարրական դպրոցում՝ Սիսավանի միջն. դպրոցի օրինակով: Հանրակրթական նոր չափորոշիչները սահմանում է նոր կարողունակությունների համակարգ սովորողների համար, ինչը ենթադրում է, որ հանրակրթական համակարգը գնում է դեպի կարողունակահեն կրթական մոդել: Փոխվել է կրթության նկատմամբ հայացքը, բարելավվում են դասագրքերը, դպրոց են ներմուծվում ժամանակակից ուսուցման մեթոդներ ու տեխնոլոգիաներ, որոնց նպատակն է՝ սովորողների մեջ ձևավորել առանցքային կարողունակություններ, որոնք թույլ կտան սովորողներին տեսական գիտելիքներն արդյունավետորեն կիրառել, կապել ուսումնական առարկաներից ստացված իրենց գիտելիքները կյանքի հետ: Պայմանավորված բարեփոխումներով՝ վերարժեվորվել են նաև բոլոր ուսումնական

	առարկաների դասավանդման նպատակներն ու վերջնարդյունքները, անմասն չի մնացել նաև ռուսաց լեզուն: Այս համատեքստում ուսուցչի գերխնդիրը ոչ միայն գետելիքների հաղորդումն է, այլ նաև սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության խթանումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը: Օտար լեզուների իմացությունը ընդլայնում է սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցական կարողությունների, լեզվամտածողության զարգացմանը: Հաշվի առնելով արդի աշխարհում օտար լեզու իմանալու կարևորությունը՝ հստակ կարող ենք նշել, որ սովորողների մեջ բավականին մեծ է մոտիվացիան որքան հնարավոր է շատ գիտելիք ամբարելու այս կամ այն օտար լեզվից: Նկատենք, որ ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների կիրառությամբ դասերի վարումը կարող է նպաստել, որ դասի ընթացքում սովորողների համար ստեղծվի աջակցող ու մասնակցային մթնոլորտ, ինչը կարող է իր հերթին նպաստել ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Այսպիսով, կարող ենք փաստել, որ նորարարություններով պայմանավորված կրթական բարենպաստ միջավայրի ստեղծումը սովորողի համար ապահովում է

	անհրաժեշտ ազդակներ, որպեսզի դասապրոցեսը դիտարկվի ոչ թե հարկադրանք, այլ սեփական հետաքրքրությունները, գաղափարներն ու ներուժը համակարգելու ու տեսանելի արդյունք ստանալու հարթակ:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	• Սովորել սովորելու կարողունակություն • Լեզվական գրագիտություն և կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Կրտսեր դպրոցականներ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	1. Գիտամեթոդական գրականության, կրթության բնագավառի իրավական ակտերի ուսումնասիրություն և վերլուծություն 2. Դիտարկումներ, փորձարարական օրվա դասի պլանավորում, արդյունքների վերլուծություն, ամփոփում:

Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	2 շաբաթ

Հիմնական բովանդակություն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումն առանձնահատկությունները ռուսերենի դասավանդման ընթացքում

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Սովորողների տեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է և կարևոր հանգամանք՝ ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում: Հայտնի է, որ օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների համակողմանի զարգացմանը, նրանց ճանաչողական կարողությունների ձևավորմանը, խթանում է կապակցված

Հետազոտության ընթացքը	խոսքն ու քննադատական մտածողությունը: Ուստի և օտար լեզվի դասավանդման ընթացքում կարելի է սովորողի մոտ զարգացնել մի շարք այլ լրացուցիչ ունակություններ: Սակայն, ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի արդյունավետությունն այսօր չափվում է ուսուցչի՝ դասը պլանավորելու և վարելու հմտություններով, ուստի կարևոր է կրկին արձանագրել, որ դասավանդման մի շարք հնարների, ՏՀՏ գործիքների կիրառումը ուսուցչին թույլ են տալիս ունենալ առավելագույն արդյունք: Այստեղ շատ կարևոր է, որ ուսուցիչը գնա բարեփոխումներին ընդառաջ, դասը վարի ժամանակակից մեթոդներով՝ սովորողին հնարավորություն տալով առավել ակտիվ դերակատարում ունենալ դասին: Եվ հատկապես օտար լեզվի ուսուցման պարագայում սովորողը պետք է շատ խոսի, հաղորդակցվի, որպեսզի ընկալի ու հասկանա տվյալ լեզվի առանձնահատկությունները, արտասանության եղանակները: Մանկավարժական աշխատողն իրավունք ունի ընտրելու և կիրառելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ՝ իր ընտրությամբ օգտագործելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած դասագրքեր և ուսուցողական նյութեր,

	ձեռնարկներ և սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդներ[1]: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ , ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին: Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն խոսքային գործունեությունը, համագործակցությունը, նպաստում է արժեքային կողմնորոշիչների, հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով[2]: Այս տեսանկյունից լեզուների ուսուցման ընթացքում բավականաչափ արդյունավետ է կիրառել ուսուցման համագործակցային մեթոդները: Այս մեթոդները հնարավորություն են ստեղծում, որպեսզի սովորողները կարողանան միասին սովորել, համագործակցել, կատարել որևէ աշխատանք, որի ընթացքում կա թիմային մոտեցում, ինչն էլ նպաստում է, որ ետ մնացող սովորողները նույնպես ակտիվ մասնակցեն դասին: Համագործակցային ուսուցման իրականացումը օտար լեզվի

[1] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 7:

[2] Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:

	ուսուցման ժամանակ նպաստում է ուսուցման արդյունավետությանը, մեծացնում է սովորողների անհատական լեզվական կարողությունները, ճանաչողությունը: Այն լավագույն միջոցներից մեկն է ուսուցման նպատակներին և արդյունքներին հասնելու համար: Այս իրավիճակում ուսուցիչը դադարում է գիտելիքների հաղորդման միակ աղբյուրը լինելուց[3]: Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին[4]:

[3] Ապրեսյան Մ., Գյուլզատյան Դ., Տեր-Սարգսյան Լ. Օտար լեզուների դասավանդման հայեցակարգային չափորոշիչներ, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար N4(13) Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան 2016:

[4] Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Երևան, 2004, էջ 145:

	Կարելի է պնդել, որ համագործակցային մեթոդներով պլանավորված դասն ամբողջովին համընկնում է կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տրամաբանությանը. «Ավանդական դասի ընթացքում գործում է ուսուցիչ-աշակերտ կապը, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին՝ նաև աշակերտ-աշակերտ կապը»[5]: Այստեղ ուսուցիչը հադես է գալիս ուղղորդողի, կողմնորոշողի, համակարգողի դերում, իսկ սովորողը դասագործընթացի կենտրոնական սուբյեկտն է, ով հետազոտում է, տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրում տեղեկություններ, համակարգում դրանք, գիտելիքները դնում գործնական կիրառության մեջ՝ հնարավորություն ունենալով այդ ամենը կատարել նաև թիմային աշխատանքի միջոցով: Կրտսեր դպրոցում երբեմն սովորողները կարող է ունենան դժվարություններ անհատական առաջադրանքներ իրականացնելիս, ինչը, որպես կանոն, հիասթափություն է առաջացնում օտար լեզվի նկատմամբ: Հղում ունելով մեր մանկավարժական գործունեությանը՝ նկատենք, որ

[5] «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020»:

	համագործակցային առաջադրանքների ժամանակ որևէ սովորող պասիվ չի մնում, բոլորն աշխատում են, օգնում իրար: Այսպիսով, պատկերավոր ու դինամիկ դասերը պետք է ուսուցչի համար լինեն գործիքներ՝ սովորողներին ռուսերեն լեզվի գեղեցկությունն ու կարևորությունը ցույց տալու, որպես ուսումնական առարկա դրա դերը կարևորելու և հիմնարար գիտելիքներով զինելու առումով:
	ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ **2.Դասավանդման մեր փորձից**
	Տեսական մասում մեր կատարած պնդումները կհիմնավորենք դասի օրինակով: Դասը պլանավորել ենք ուսուցման համագործակցային մեթոդներով, կիրառել ենք նաև ՏՀՏ գործիքներ՝ նպատակ ունենալով շեշտադրել նաև դասի ընթացքում դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացումը: **Առարկան** — **Ռուսաց լեզու** **Դասարանը** — 3-րդ **Դասի թեման** — «Теремок» **Դասի տիպը** — Ամփոփման, գիտելիքների ստուգման դաս

Դասի նպատակները	1.Աշակերտը պետք է կարողանա սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը, մեկնաբանել ընթերցածի բովանդակությունը, վերարտադրել բնագիրը, աշխատանքի ընթացքում դրսևորել ստեղծագործականություն: 2.Աշակերտը պետք է կարողանա վերաբերմունք արտահայտել բարության, փոխօգնության, ընկերության մասին: 3. Աշակերտը պետք է կարողանա տարբերել կենդանիների հատկանիշները, անվանել դրանք ռուսերենով, կազմել նախադասություններ:
Դասի կահավորումը	• Ցուցապաստառ • Համակարգիչ, պրոեկտոր
Միջառարկայական կապեր՝	• Մուլտֆիլմի դիտում

Կիրառվող մեթոդներ և հնարներ	«Հարցադրումների մեթոդ» «Մտագրոհ» «Մ-աձև աղյուսակ» «ԳՈՒՍ»

Ուսուցիչը կհանձնարարի, որ սովորողները, իրար շարունակելով ընթերցեն բնագիրը, որից հետո: Հաջորդիվ ուսուցիչը գրատախտակին կփակցնի հեքիաթի հերոսների նկարները, և սովորողները կփորձեն հատկանշավորել նրանց թե' արտաքինը, թե' իրենց հայտնի բնավորության գծերը: Աշխատանքը կիրականացվի «Մտագրոհ» մեթոդով՝ խմբային եղանակով: Յուրաքանչյուր խումբ հնարավորություն կստանա առանձնացնել բանալի բառեր և ներկայացնել իր առաջադրանքը: Առաջադրանքը կամփոփվի խմբային քննարկումների միջոցով:

Սովորողների ստեղծագործական ունակությունները զարգացնելու և միևնույն

ժամանակ լեզվի իմացությունը խորացնելու, բառային պաշարը հարստացնելու համար կկիրառվի հարցադրումների մեթոդը:



Բառային պաշարը հարստացնելու նպատակով կկիրառվի «Մ-աձև աղյուսակ» մեթոդական հնարը, սովորողները կաշխատեն շարքերով:

Առաջադրանքի օրինակ: Լրացրե՛ք աղյուսակը



Նյութն ամփոփելու նպատակով կկիրառվի ՏՀՏ գործիք: Տեսասահիկի ուղեկցությամբ սովորողները դերախաղով կներկայացնեն հեքիաթը, ինչը կօգնի, որ զարգանա և՝

խոսքային կարողությունը, և' ստեղծագործական ունակությունները:

Դասի ավարտին սովորողները կդիտեն «Теремок» մուլտֆիլմը:

Այսպիսով, հաջորդ դասի հարցման ընթացքում պարզ դարձավ, որ սովորողների գերակշիռ մասը կարողանում է դասի հիմնական հասկացությունները մեկնաբանել, գիտի անծանոթ բառերի նշանակությունը, կարող է ինքնուրույն գործածել նախադասությունների մեջ: Խոսքը կշռադատված է, չկա մեխանիկական վերարտադրություն: Կարծում ենք, որ այն վերջնարդյունքը, որն ակնկալում էինք ունենալ, ստացանք, քանի որ կարողացանք ապահովել սովորողների համաչափ մասնակցությունը դասին, թույլ տվեցինք, որ նրանք համագործակցեն, խմբերում ունենան ինքնուրույնություն, ստեղծագործեն ու հանդես գան նախաձեռնողի դերում: Ի հակադրություն նշվածի՝ նկատենք, որ աշակերտակենտրոն ուսուցման արդյունքում

	ուսումնական նյութն առավել պակաս չափով է յուրացվում, սովորողն ինքնուրույն գործելու, ստեղծագործելու հնարավորություն ավելի քիչ է ունենում, քանի որ շեշտը դրվում է բացատրական աշխատանքների և ֆրոնտալ հարցման վրա:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Մեր հետազոտության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում, այնուամենայնիվ մի բան հստակ է, եթե ռուսերենի դասավանդման ընթացքում ուսուցիչը հիմնական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ նպատակ է դնում զարգացնել սովորողի ստեղծագործական ունակությունները, ապա հարկավոր է դուրս գալ ուսուցչակենտրոն կրթական միջավայրից՝ նախապատվություն տալով սովորողակենտրոնին: Այստեղ նպատակահարմար է կիրառել ուսուցման ժամանակակից մեթոդներ, ՏՀՏ գործիքներ, որոնք կարող են մոտիվացնել ու ոգևորել սովորողներին:Այս ամենը կրտսեր դպրոցականների համար ունի նաև մոտիվացիոն մեծ նշանակություն և օգնում է, որ սովորողները առավել հետաքրքրվեն առարկայով:Սովորողի հետ հաշվի նստել, լսել

	նրա կարծիքը, խրախուսել վերջինիս, ստուգման ընթացքում շեշտադրել ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչը, կարծում ենք, որ նման մոտեցումը ուսուցչի հաջողելու գրավականներն են:Այսպիսով, կցանկանայինք վերահաստատել մեր պնդումն առ այն, որ ուսուցչի աշխատանքի ընթացքում վերջինիս ընտրած մեթոդական եղանակներն ու առհասարակ դասի տեսակները կարևոր նշանակությունը ունեն դրական ու խոստումնալից վերջնարդյունք ապահովելու առումով: Թեմայի շրջանակներում կառաջարկենք առավել հաճախ դիմել միջառարկայական կապերին, սովորողների համար ստեղծել համագործակցային միջավայր, որպեսզի բարձրանա վերջիններիս սովորելու մոտիվացիան: Եթե սովորողն ունի մոտիվացի և ոգևորություն, կարծում ենք՝ դասը կարելի է համարել արդյունավետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում:
3. Ապրեսյան Մ., Գյուլզատյան Դ., Տեր-Սարգսյան Լ. Օտար լեզուների դասավանդման հայեցակարգային չափորոշիչներ, Օտար լեզուները

մասնագիտական նպատակների համար N4(13) Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան 2016:
4. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Երևան, 2004:
5. «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020»:

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր	https://youtu.be/hmqN1p5yQco?si=yXhSkMpm_dbip7wX ТЕРЕМОК - МУЛЬТИК Русская сказка.
• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ	